# Վարժական հավաքներ հայտարարելու մասին

Նախագիծ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

2019 թվականի N -    Ն

ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ

ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասով` Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ  է.

1. Հայտարարել պահեստազորի առաջին խմբի առաջին կարգում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստազորայինների վարժական հավաքներ` 40 օր ժամկետով` 2019 թվականի հոկտեմբերի 20-ից մինչև նոյեմբերի 30-ը:
2. Վարժական հավաքները հայտարարվում են պահեստազորում հաշվառված քաղաքացիների`

1) ռազմական ունակությունների կատարելագործման,

2) մասնագիտական վերապատրաստման,

3) մասնագիտական պատրաստման,

4) բարձրագույն կրթություն ունեցող ենթասպայական կազմից պահեստազորի սպաների պատրաստման նպատակով:

3. Վարժական հավաքներին ներգրավվել ընդհանուր թվով 316 քաղաքացու, որոնցից 220–ը` շարքային կազմի, 12-ը` ենթասպայական կազմի, 84-ը` սպայական կազմի պահեստազորայիններ:
4. Սահմանել, որ վարժական հավաքներում ներգրավվում են`

1) հրթիռահրետանային մասնագիտություններով` 159 պահեստազորային, որոնցից`

ա. 82 պահեստազորային` 2019 թվականի նոյեմբերի 12-18-ը ներառյալ.

բ. 8 պահեստազորային` 2019 թվականի նոյեմբերի 12-21-ը ներառյալ.

գ. 47 պահեստազորային` 2019 թվականի նոյեմբերի 14-20-ը ներառյալ.

դ. 22 պահեստազորային` 2019 թվականի նոյեմբերի 19-28-ը ներառյալ,

2) հակաօդային պաշտպանության մասնագիտություններով` 6 պահեստազորային` 2019 թվականի նոյեմբերի 18-24-ը ներառյալ,

3) կապի մասնագիտություններով` 23 պահեստազորային` 2019 թվականի նոյեմբերի 6-12-ը ներառյալ,

4) հետախուզական մասնագիտություններով` 95 պահեստազորային, որոնցից`

ա. 44 պահեստազորային` 2019 թվականի հոկտեմբերի 22-31-ը ներառյալ.

բ. 6 պահեստազորային` 2019 թվականի նոյեմբերի 19-25-ը ներառյալ.

գ. 45 պահեստազորային` 2019 թվականի նոյեմբերի 19-28-ը ներառյալ,

5) տեխնիկական մասնագիտություններով` 33 պահեստազորային` 2019 թվականի նոյեմբերի 4-10-ը ներառյալ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019թ.

Երևան